Հաղթանակի հպարտություն

Արցախյան գոյամարտում զոհված եւ ապրող հերոսների մասին շատ է գրվել, բայց այդ շարքում առանձնանում է վերջերս ՀՀ ՊՆ հրատարակչության լույս ընծայած Սամվել Եղիազարյանի «Նվիրյալները» գիրքը, որն ամբողջությամբ նվիրված է 1990թ. սեպտեմբերի 20-ին կամավոր հիմունքներով կազմավորված Հատուկ գնդի զոհված ազատամարտիկների հիշատակին:

«Եթե մտովի կասկածներ ունեք, եթե տարակուսանքը սողոսկում է ձեր հոգու ներսը, մուքը՝ միտք ու վախը՝ մարմին, գնացեք Արցախ:

Գնացեք, նույնացեք Շահումյանում, Մարտակերտում, Լաչինում, Օմարում կռված ու զոհված «Հատուկ գնդի» տղաների հետ», - ներկայացնում է հեղինակը:

Հուշալբոմի առաջին էջերը նվիրված են գնդապետ Վլադիմիր Կարապետյանին, որը 1992թ. հունվարին ստանձնեց «Հատուկ գնդի» հրամանատարությունը եւ զոհվեց հունիսի 17-ին, մարտական գործողության ժամանակ, Մատաղիս գյուղի մոտ՝ իր զինվորների համար դառնալով իրական լեգենդ:

Հաջորդը՝ հետմահու Ազգային հերոսի կոչման արժանացած Ջիվան Աբրահամյանն է...

Զոհվածներից յուրաքանչյուրին հատկացված առանձին էջերում, նրանց լուսանկարների կողքին տեղադրված են հայ դասական պոեզիայից ընտրված բնութագրական քառատողեր: Համառոտ կենսագրականից բացի, զետեղված են հերոսների սխրանքը ներկայացնող ակնարկներ, ասույթներ, բանաստեղծություններ պարտքի, պատասխանատվության, հայրենասիրության եւ բարոյական այլ չափանիշների մասին:

Քաջորդիներից շատերը թաղված են «Եռաբլուր» եղբայրական պանթեոնում, մի մասը՝ իրենց հայրենի քաղաքի կամ գյուղի գերեզմանատանը, կան նաեւ անհայտ կորածներ, որոնք տապանաքարեր չունեն, բայց թողել են իրենց բարի անունը այս գրքում:

Հեղինակն իր շնորհակալությունն է հայտնում գրքի հովանավորներին եւ բոլոր նրանց, ում օգնությամբ եւ աջակցությամբ հնարավոր եղավ իրականացնել այս գեղեցիկ մտահղացումը: Համոզված ենք, որ գիրքը կարդալուց հետո բոլոր ապրողների հոգիներում կորստի ցավի հետ կշարունակի ապրել նաեւ հաղթանակի հպարտությունը:

Մելսիանե ՀԱԿՈԲՅԱՆ

Հ.Գ. Օգտվելով ընձեռված հնարավորությունից՝ ուզում ենք խնդրել երեւանաբնակ բոլոր ազատամարտիկների հարազատներին, որպեսզի նրանք առաջիկայում ներկայանան մայրաքաղաքային «Հատուկ գունդ» եւ փոխգնդապետ Գեւորգ Հակոբյանից ստանան իրենց համար նախատեսված «Նվիրյալները» գիրք-հուշալբոմի օրինակները: